

էր մեծամեծ ակնկալութեամբք և տա-
րակուսի մէջ ձգեց երկիրը ապագայ
յառաջագիւմութեանց համար:

Միքայէլ իշխանը ծնած էր 'ի Քրա-
կուիէվադ 1823ին, և ամուսնացեր
էր 1853ին Յուլիա Հիւսթատի կոմսու-
հայն հետ, ուսկից իւր ամուսնեանը
համար բաժնուեցաւ: Եւ այսպէս կը
մարի իրմով Օպրէնովիչներու ուղիղ
շառաւիղը:

Միքայէլի մահուան վրայ ըստ սովո-
րութեան առժամանակեայ կառավա-
րութիւն մը հաստատեցաւ. որն որ ազ-
գային ժողով մը գումարեց յուլիսի 2ին,
որ հետամուտներէն մէկուն վրայ իր
ընտրութեանը կարծիքը տայ:

Եւ ընտրեց Միլան Օպրէնովիչը՝ ե-
րեքտասանամեայ պատանի, Միլոշի
եղբորորդին, որ Բարիդ իր ուսումը կը
կատարէր, և իր անունը թէ 'ի զօրաց
և եթէ 'ի ժողովրդենէ մեծ ցնծութեամբ
ընդունելի եղաւ, և կարգեցաւ իրեն
առժամանակեայ խնամակալ մը մինչև
հասնի իր առողջ հասակին:

Բորդոգալի քաղաքորոշքեան աշխար-
հագրորշիւնը ու պատմական հիւ
և նոր վիճակը:

Բորդոգալ հարաւային Եւրոպիոյ
թագաւորութիւնը, է 'ի յարեմտից
Սպանիոյ. մայրաքաղաքն է Լիդպոնա:
Հիւսիսէն սահմանն է Կալիցիան, արե-
ւելքէն Լէոնի թագաւորութիւնը, Էս-
դրէմատուրա սպանիական և Սնտալու-
սիա, 'ի հիւսիսոյ և յարեմտից Սալան-
տեան ովկիանոսը. ընդ մէջ 36° 58' և
42° լայնութեան և 8° 30' և 11° 54'
երկայնութեան աստիճանաց: Երկրին
մակերեսութն է 100,034 քառակուսի
հազարամեղր. բնակիչն ալ է 3,923,410.
ասոր վրայ պէտք է աւելցնել Սզորեան
կղզիները, Ափրիկէի, Ասիոյ և Ովկիա-
նիոյ մէջ ունեցած կալուածները, ո-
րով բովանդակն է 6,255,000 հոգի:

Բորդոգալ սպանիական ցամաքա-
կղզւոյն արեւմտեան զառ 'ի վայրին ստո-

րին աստիճանին վրայ է: Սպանիայէն
աւելի աղէկ է դիրքը և անոր իրեք մեծ
գետերուն բերանը և նաւարկելի մա-
սերը ինքը բռնած է. Կալիցիա և Սն-
տալուսիա երկու ծայրից նահանգները
իրարմէ կը բաժնէ. վերջապէս 'ի բնէ
զօրաւոր սահմանադրութիւն մ' ունի, որ
ըստ ինքեան հակառակ է բնական աշ-
խարհագրական օրինաց. վասն զի ա-
նոնք ոչ եթէ լերանց երկայնաձիգ գիծ
մ' են, այլ սպանիական պարուց կո-
հակները իբրեւ երկայն և թանձր պա-
րիսպ մը կը ձևացնեն, որոնց մէջէն
հազիւ թէ քանի մը խրամատ բանա-
լով հեղեղալից գետեր կ'անցնին:

Բորդոգալի բարեխառնութիւնը շատ
աւելի բարձր է քան ինչ որ է 'ի Սպա-
նիա. ամառուան տաքերը սաստիկ նե-
ղացուցիչ են, և ձմեռները միայն լե-
րանց ծայրերը ձիւն կու գայ: Իսկ Բոր-
դոգալի թագաւորութիւնը աղօսող լեռ-
ները շարունակութիւն են Սպանիոյ ի-
րեք մեծ կեդրոնային պարերուն: Գե-
տերը բազմաթիւ են, որոնցմէ են Դա-
կոյ, Տուէրոյ, որ իբրեւ սահմանադրութիւն
է Սպանիոյ և Բորդոգալի, 80 հազարա-
մեղր երկայնութեամբ. Մինհոյ, Մոն-
տեկոյ և Վուկա. այս երկու վերջիննե-
րուն ահունքը Բորդոգալի երկրին մէջն է:

Լեռները շագանակի ծառերով լի
են. հովիտներն առատ և սքանչելի գի-
նիներ կը մատակարարեն (Բորդոյ,
Քարսավէլոս, Սէդուպայ և այլն. տարին
2,736,000 հարիւրալիդր). նուռ, նա-
րինջ (493,000 սնտուկ) ձիթապտուղ,
թուղ գրեթէ 7 միլիոն հազարազրամ:
Տափարակ գետիններուն վրայ ալ ա-
ղէկ բեղնաւոր են արմուիք (Մինհոյ,
Պէյրա, Դրաս-Լոս-Մոնդէս նահանգը).
նաեւ ամենաճոխ է մէրիկոս ոչխարի
կողմանէ, որոնցմէ 2,500,000է աւելի
գլուխ կը համրուի: Արօտի սակաւու-
թիւնը շատ չներեր մեծ արջառեղէն-
ներ դարմանել: Սնտառներու մէջ շատ
կը գտնուին գայլ, սյծեամն, եղջերու
և կինճ. վայրենի այծերը ամայի կող-
մեր խումբ խումբ կը պտըտին. սակայն
պղտիկ որսական կենդանիները սակա-



Լիզպոնա:

ւազիւտ են: Երկիրը շատ մը տեսակ մետաղներու և քարերու հանքեր ունի, որոնք չեն բանեցուիր, բայց 'ի Էսդրէմա, տուրայի երկաթի քանի մը հանքերէ: Երբեմն Դակոյ գետը ոսկեթաւալ էր, և Լուսիտանիոյ թագաւորաց դաւազանը գետին տղմէն հանուած ոսկիէն կը շինուէր:

Բորդոգալ 17 վիճակ (district) կը բաժնուի, որոնք 7 նահանգի կը վերածուին, և են ՄԻՆՀՈՅ, ԳԼ. քաղաք Բորդոյ. ԴՐԱՍ-ԼՈՍ-ՄՈՆԴԷՍ, ԳԼ. քաղաք Պրակասնա. ԱԼԷՄԴԷՅՈՅ, ԳԼ. քաղաք Էվորա. ՍՏՈՐԻՆ-ՊԷՅՐԱ, ԳԼ. քաղաք Գոյիւսյրա. ՎԵՐԻՆ-ՊԷՅՐԱ. ԳԼ. քաղաք Գասպէլոյ-Պրակսոյ. ԷՍԴՐԱՄԱՏՈՒՐԱ, ԳԼ. քաղ. Լիզպոնա. ԱԼԿԱՐՎԱ, ԳԼ. քաղ. Ֆարոյ:

Ճարտարութիւնք և արուեստք քիչ զարգացած են Բորդոգալի մէջ. նախնական նիւթոց պակասութիւնը և ներքին հաղորդականութեան ճամբաներու նուազութիւնը վաճառականութեան մնալուն շատ պատճառ եղած են, որով միայն գետոց բերաններուն վրայ վաճառականութիւնը ծաղկած է. դուրս հանուած բերքերն են նարինջ, չոր թուզ և գինի և այլն:

Բորթոգալցիք սթափ են, կայտառ, կորովի, հայրենասէր և հաստատուն 'ի

սէր և յատելութեան. դժբաղդարար նիւթական են. ուսմունք և կրթութիւն քիչ տարածուած է մէջերնին. երկրագործութեան մեծ հոգ չունին և ամենայն ճարտարութիւնք և արուեստք Անգղիացոց ձեռքն են: Քաղաք քաղաքի հետ միութիւն, իրաւաստհութիւն և դաշնագրութիւն ամենեկին չունին. և ոչ իսկ քաղաքագիտօրէն: Բորդոգալի ամենայն խռովութիւնք ծագած են 'ի Լիզպոնա կամ 'ի Բորդոյ, բայց ոչ երբեք հասարակաց հաւանութեան գործ մը եղեր են: Ժամանակէ մը 'ի վերջանք կայ երկրին նիւթական բարօրութիւնը վերածնանելու համար: Երկաթուղեաց և շոգեշարժ նաւուց ձեռնարկութիւնները կարգաւորուելու հետ են: Տարեկան ծախքն են 80,000,000 ֆր. մուտքը 73,800,000 ֆր.: 1854ին յուլիսի 29ին օրէնքը ոսկւոյ և արծաթի դրամոց տասանորդական դրութիւնը սահմանեց:

Բորդոգալի բանակը 24,500 անձէ կը բաղկանայ, առանց հնդկային բանակը մէջը սեպելու. մինչև 'ի 1855 զօրաժողովը բռնութեամբ էր. հիմա զինուորագրութիւնը ըստ Գաղղիոյ ոճոյն կանոնաւորեալ է: Ծովային զինուորութիւնն ունի 1 մեծ նաւ, 1 ֆրէկատ, 3 քորվէտ, 3 պրիք, 9 շոնէր, 18 բեռ-



Կիևն անկեալսաձառ 'ի Բարսիլիոյ .

Նաբարձն աւ և 12 շողեշարժն աւ :

Նաւատորմիւն ընդ ամենը 389 թընդ-
անօթ ունի և 2,832 սպայ կամ նա-
ւաստի : Կառավարութիւնը սահմանա-
դրական միապետութիւն է . կալուած-
ներն ալ երեսփոխաններ կը խաւրեն
առ խորհրդարանն : Գրեթէ ամենայն
Բորդոգալցիք ուղղափառ են՝ բայց նաև
ամենայն կրօնք ներելի են : Հաւատա-
քնութիւնը ժկդ դարուն վերջերը վեր-



Վաճառող քաչկոց 'ի Բարսիլիոյ .

ցունցաւ : Տպագրութեան ազատու-
թիւնը ամենեկին սահման չունի :

Սպանիա և Բորդոգալ թէպէտ և
սահմանակից են իրարու՝ այլ բնակիչքը
բոլորովին տարբեր կեանք կ'անցընեն
և հազիւ կը ճանչցուն : Կրնայ ըսուիլ
թէ չկայ այսպէս երկու տէրութիւն ու-
րոնք իրարու հետ այսչափ քիչ վերա-
բերութիւն ունենան , որով ոմանց ու-
նեցած գաղափարը այս երկու աշխար-

Հաց 'ի մի ձուլուելուն ըստ ազգութեան
և ըստ քաղաքագիտութեան՝ մտացա-
ծին մեծ ցնորք մ' է և ոչ այլ ինչ :
Բորդոգալցւոց լեզուն գաւաղիչեան լե-
զունն գաւառական մէկ բարբառն է :

Բորդոգալ բազմաթիւ կարևոր կա-
լուածներ ունի, Ազորեանց արշիպեղա-
գոսը՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ.
Ափրիկէի մէջ՝ Մատէյրա և Բորդոյ-Սան-
դոյ կղզիները, Կանաչ-Սարին արշիպե-
ղագոսը, Սենեկամպիոյ, Անկոլայի և
Քոնկոյի ստացուածները, Ս. Թովմաս և
Իշխանի կղզիները և Մոզամպիկ նա-
հանգը. Ասիոյ մէջ Կոա, Տիու, Մա-
դաոյ. Ովկիանիոյ մէջ Տիլէ՝ Դիմոր
կղզւոյն մէջ, և Քամպինկ՝ 'ի հիւսիսոյ
Դիմորի : Պրազիլ՝ որ 1821էն 'ի վեր ան-
կախ է, ատենօք Բորդոգալցւոց կա-
լուած էր :

Պատմութիւն : Հին ժամանակ : —
Բորդոգալ կը համապատասխանէ մե-
ծաւ մասամբ հռովմէական Լուսիտա-
նիոյ նահանգին : Բնակիչք՝ որ Կելտք
(Celts) են իրենց սկզբնական ժաղ-
մամբը՝ ինչպէս կը հաւատեն դրուի-
դաց ժամանակէ մնացած յիշատակա-
րանները, անկախութիւննին պաշտպա-
նելու համար յաջորդաբար Կարթեդո-
նացւոց դէմ կռուեցան, Պունիկեան
երկու առաջին պատերազմներուն ժա-
մանակ, և երկրորդէն ետքը՝ հռովմայե-
ցւոց դէմ, որոնք իրենց վախճանին հա-
սան նենգաւոր կոտորածներով և վի-
րիաթը սպաննելով. Լուսիտանիացիք
ուրեմն երկայն ժամանակ և յաջողու-
թեամբ իրենց դէմ դրին : հռովմայե-
ցւոց տիրապետութիւնը հինգ ու կէս
դար տևեց, ինչուան այն ատենն որ
Բարբարոսք սկսան անդամատել Արև-
մտից ինքնակալութիւնը :

Միջին դար, ինչոչան Բորդոգալի
քաղաքաշրջքեան ճագոռմը, 409-1139 :
Արաբական և գերմանական կրկին առ-
պատակութիւնները հետզհետէ թե-
րակղզւոյն առ մասին նոր տէրերու ձեռք
իյնալուն պատճառ եղան : Մինչդեռ 'ի
Կալիցիա Սուեվք կ'իշխէին (409-585),
Լուսիտանիա ալ անցաւ յաջորդաբար

Ալանաց ձեռքը, որոնք 417ին յաղ-
թուեցան 'ի վիսիգոթաց, որ առժա-
մանակ մը օգնականք էին հռովմայ, և
զլուսիտանիա հռովմայեցւոց կայսրու-
թեանը ստացուած ըրին. յետոյ 467ին
ատենները վիսիգոթաց, որոնք գոհ չըլ-
լալով Սուեվքերը անկից հալածելուն
վրայ՝ որ հիւսիսային մասին տիրեր
էին, ընկճեցին բովանդակապէս իրենց
թագաւորութիւնը, 585ին. վերջապէս
Արաբացւոց, որոնց ձեռքը մասնուեցաւ
բովանդակ Սպանիա՝ Խսերէսի մարտա-
կռուովը 711ին : Հետագայ իրեք դա-
րերու ժամանակ Աստուրիոյ քրիստո-
նեայք զարգանալով հետզհետէ Մահ-
մետականաց ձեռքէն յափշտակեցին և
Ովիեդոյի և Լէոնի թագաւորութեան
հետ միացուցին զԿալիցիա և հին Լու-
սիտանիան, ինչուան Դակոյ. և 1094ին
կամ 1095ին Ալփոնսոս Զ. Լէոնի և
Գասդիլիոյ թագաւորն՝ ընդ մէջ Մին-
հոյի և Դակոյի եղած երկիրը բաժնեց
իր տէրութենէն և Հենրիկոս Պուրկոյնի
իր փեսին տուաւ : Բորդոգալ՝ որ Բոր-
դոյ քաղաքին անուամբը իրեն մերձա-
կայ եղած նահանգները ստրածուած
էր, քիչ ատենէն մեծադոյն երկիր մը
իրեն բաժին ըրաւ. նախ որ Գասդի-
լիոյ հպատակ էր՝ յետոյ անկախ տէրու-
թիւն եղաւ՝ երբ Ալփոնսոս Զ. Հենրի-
կոսի որդին զլուսի քաջեց հպատակու-
թենէն և իրեն զինուորներէն թագա-
ւոր անուանակոչեցաւ 1139ին :

Պոչրկոյնի հարստութիւնը, ոչոյիդ
գճով, 1139էն ինչոչան 1383 : — Բոր-
դոգալցիք այսպէս ձեւաւորուելուն ժա-
մանակ մեծապէս մասնակից եղան թե-
րակղզւոյն մահմետականութեան դէմ
յարուցած յարատե խաչակրութեանը.
իրենք միայն էին Ալմոհատեանց դէմ
Սանդարէմի յաղթութեանը ժամա-
նակ : 1184ին օգնեցին Դոլոդայի լաս
Նավասի յաղթութեանը, 1340ին Սալա-
տոյի, որով Մերինիոք հալածուեցան :
Ալփոնսոս Ա. ին ժամանակ Էսդրէմա-
տուրան, Ալէմդէյոն և Լիզպոնան ալ
իր մէջն առնելով մեծցաւ, և Ալփոն-
սոս Գ. ի ժամանակ, 1249-53 ստացաւ

նաև Ալիարվեանքը, և նոյն ատենէն 'ի վեր է որ հիմակուան սահմանն ունի: Մի և նոյն ժամանակ նաև իր սահմանադրութիւնն ալ ձևացաւ: 1143էն ետքը Լամէկոյի Գորդէա ժողովը, որ բաղկացեալ է կղերէն, ազնուականներէն և քաղաքաց և աւանաց երեսփոխաններէն, շատ օրէնսդրութիւններ ընդունեցաւ այս առաջին ժամանակներուն մէջ, և Բորգոգալի անկախութիւնը հրատարակեցաւ, իբրև ժառանգական թագաւորութիւն մը նաև կանանց համար, պայմանաւ որ՝ Բորգոգալի իշխանագունի հետ կարգուին, որ թագաւորի պատուանուն պիտի չունենար՝ ինչուան որ արու զաւակ մը չծնանէր: Այս ժողովները անկանոնապէս հաւաքուելով շարունակեցին իրենց միջամուխ ըլլալը կառավարութեան մեծամեծ խնդիրներուն մէջ:

Աշիզի ձիշղը, 1385—1580: Բորգոգալի ամենէն պայծառ ժամանակն աս է: Արտաքոյ Ափրիկէի հիւսիսային ծովեղերաց վրայ շատ կարևոր կէտեր ստացաւ պատերազմով (Սէւդա, Դան-

կէր և այլն): Տիազ, Կամա և Կապրալ նաւորդներն ալ Տոն Հենրիկոսէն, Յովհաննէս Բ. էն, Էմմանուէլ Բաղդաւորէն յորդորուած՝ այն ընդարձակ կողման արևմտեան և արևելեան ծովափուները գտան, որով նոր ճամբայ բացուեցաւ դէպ 'ի Հնդկաստան և դէպ 'ի Պրազիլ. ասոնց հետեւելով Ալմէիտեանք և Ալպուքէրը գնացին յԱփրիկէ և մանաւանդ յԱսիա՝ Բորգոգալեան ընդարձակ իշխանութիւն մը հիմնելու, և տարածուելով մինչև 'ի Պրազիլ՝ իրենց վաճառականութիւնը մեծապէս զարգացուցին և անհուն հարստութիւն զիղեցին: Դժբաղդաբար Արևելքի ճոխութիւնը Բորգոգալի երկրինը մոռցնել տուաւ, որով երկրագործութիւնը՝ որ ԺԴ դարուն մէջ շատ ծաղկած էր, երեսէ ձգուեցաւ: Իսկ ներքուստ թագաւորութիւնը Գորդէա ժողովոյն և ազնուապետութեան ծախիւքը մեծնալով՝ նոր փայլ մ'առաւ, և Կիլ-Վիկէնտի, Քամէնսի, Պարրոսի և Ոգորիոսի անուններովը մեծ մաս մը ստացաւ ԺՁդ դարուն մատենագրական փառացը մէջ:



Բորդոյ:

Սպանիական տիրապետութիւն և Պրակաւնցիայի ձիշղը, 1580էն ինչուան վեր օրերը: — Բորգոգալ Հենրիկոս Ծիրանաւոր թագաւորին մահունէն ետքը Սպանիայէն ընկճուելով՝ 60 տարի իբրև նահանգ մը սեպուեցաւ, և նաւատորմին հետ կալուածներն ալ կորսնցուց. և եթէ 1640ին դարձեալ անկախութիւնը ըս-

տանալով Ափրիկէի և Պրազիլի կալուածները կրկին ստացաւ, սակայն չկրցաւ ներքին և արտաքին մեծութիւնն ու յաջողութիւնն երկրորդ անգամ ունենալ: 1660ին թողլով զՊոմպէյու Դանկէրն ու Սէւդան, ժամանակաւ Ասիոյ մէջ և Ափրիկէի արևելեան և արևմտեան ծովեղերաց վրայ քանի մը տեղ ունեցաւ: Ներքսապէս 1703էն

եաքը հետզհետէ երկրագործութեան
և արուեստից մէջ անհոգանալով սաս-
տիկ ինկաւ, և այս թշուառ վիճակէն
զինքը բռնի ազատել փորձեց Բոմպալ:
Յետոյ կրկին անդամ՝ 1801ին և 1806ին
Անգղիացւոց համար իր նաւահանգիստ
ները փակել ստիպուելով Գաղղիա
Սպանիոյ հետ միաբանած զաղտնի դաշ-
նադրութեամբ 'ի Ֆոնդէնըպլոյ՝ զԲոր-
դոգալ իրեք մաս բաժնեցին, որ ոչ եր-
բեք գործադրուեցաւ. և երբ Գաղղիա-
ցիք երկիրը գրաւեցին՝ 1808ին յունիս
ամսոյն մէջ Սպանիոյ հետ խօսքը մէկ
ընելով և ձեռնառու գտնալով զԱնգղիա
դարձեալ անկախութիւնը ստացաւ, բայց
Անգղիացւոց զօրաւոր ազդեցութեանը
տակ իյնալուն համար, և ինչուան
1820ին յոգնելով այդ ծառայութենէն
և սպանիական ժամանակին անդր-ա-
զատական յեղափոխութենէն հրապու-
րուելով, բովանդակ Բորդոգալ ոտք ե-
լաւ (24 օգոստ 1820): Այս շարժմանց
ժամանակ Պրազիլ ալ բաժնուեցաւ, և
Թագաւորին որդին Տոն Բետրոյ հոն
կայսր եղաւ: Յովհաննէս Զ.ի մահը,
Տոն Բետրոյի՝ իր յաջորդին՝ նոր ազա-
տական հրովարտակ մը հանելը և Բոր-
դոգալի զահը իր դստերը Տոնա Մա-
րիամու թողուլը 1826ին նոր մաքառ-
մանց պատճառ եղան. ոմանք նոր թա-
գուհւոյն կողմը բռնեցին և ոմանք Տոն
Միկէլի, որ 1824ին ինքզինքը Թագա-
ւոր անուանակոչեց, և զահը չթողուց՝
ինչուան որ Տոն Բետրոյ Պրազիլի թա-
գէն հրաժարելով եկաւ իր աղջիկը թա-
գաւորեցնելու. յետոյ Արմատականք
կոչուածները Հրովարտականք կոչեալ
ներուն հետ երկայն ատեն կռուելով,
վերջապէս 1842ին Տոն Բետրոյի հրո-
վարտակը հաստատեցին: Ամենայն
կարգը և կանոնք սկսեք էին իրենց
նախնական վիճակն առնուլ և կը զար-
գանար տէրութիւնը Գոսդա-Գապրալ

Թոմար կոմսին հոգաբարձութեանը
ժամանակ, որ 1838էն 'ի վեր պաշտօ-
նեայ էր և նախագահ խորհրդոյ 1849էն
'ի վեր, երբ 1851ին Սալտանհա մա-
րաշխտին գրգռութեամբը ծագած զի-
նուորական խռովութիւն մը, 1826ին
հրովարտակը բարեկարգելու պատ-
րուակաւ որուն վրայ յաւելուած մը ը-
րած էր, ուղեց հին կուսակցութիւննե-
րը ոտք հանել. որոնցմէ թէ Արմատա-
կանք և թէ Հրովարտականք կոչուած-
ները՝ հաւասարապէս մեծամեծ պաշ-
տօններու վրայ ըլլալով, նեցուկ են և
ամբուլութիւններկայ կառավարութեան:

Յիշողութեան տեսակ մը կայ զոր ժամանա-
կաւ և սրտով կը ստանանք. յիշատակը սրտցա-
ւութեան հետ կապուած է: Ինչպէս լեռնային
երկիրներու մէջ առաջին տեղադիրները աչքէ կը
խուսափին, և բարձունք և հորիզոնք միայն աղէկ
կը տեսնուին, այսպէս է նաև կենաց մէջ:

ԹԵՈՓԻԼՈՍ ՏԻՖՈՒՐ

Չարմանքն աւելի նրբամիտ է և նրբիմաստ՝
քան զատելութիւն:

Արնանք մարդկանց վրայ լաւագոյն դատաս-
տան ընել իրենց շարմանալի երևցած նիւթե-
րէն, քան թէ անսիրելի սեպածներէն:

Գերագոյն մարդը գիտէ իր հակառակորդաց
խօսքերը, և հակառակորդը իրենինները չեն
գիտեր:

ՀԵՆՐԻԿՈՍ ՊՈՒՇԵ

Ո՛վ որ յաջողութեան կը փափաքի՝ պէտք
է առաւօտանց ժամը հինգին ելլէ:

Ո՛վ որ արդէն յաջողութեան մէջ է՝ կրնայ
միայն ինչուան ժամը եօթը քնանալ:

Առածք Անգղիացոց: